

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ռ. Ե. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՐԵՔՆՈՒԿԻ ՎԱՐՍԱՆԳԻ ԵՎ ԾԱՂԿԱՓՈՇՈՒ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Միամյա երեքնուկներից պարսկական երեքնուկը (*Trifolium resupinatum* L.), որը այլ կերպ անվանվում է նաև շաբդար, հայտնի է եղել Պարսկաստանում դեռ վաղ ժամանակներից և օգտագործվել է տարբեր նպատակների համար: Շաբդարի սելեկցիոն-սերմնաբուծական աշխատանքների համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում վարսանդի և ծաղկափոշու կենսոնակության պահպանման տևողության ուսումնասիրությունը:

Բազմաթիվ հետազոտություններով հաստատված է, որ գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների ծաղիկների վարսանդի կենսոնակության պահպանման տևողությունը մեծ չափով կախված է արտաքին միջավայրի պայմաններից, հատկապես օդի հարաբերական խոնավությունից և ջերմաստիճանից:

Ծաղիկների ձևավորման ու զարգացման շրջանում ջերմաստիճանի համեմատական իջեցումը, օդի և հողի խոնավության բարձրացումը երկարացնում են վարսանդի կենսոնակության տևողությունը:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ թիթեռնածաղկավոր խոտաբույսերի վարսանդը ավելի կենսունակ է լինում ծաղիկների բացվելու առաջին, երկրորդ և երրորդ օրերում: Նշված ժամկետներում կատարված փոշոտումներից ստացվում է ամենաբարձր արդյունքը՝ 70,6—73,6% սերմնակալում:

Ն. Պ. Գոլուբեի [2] ուսումնասիրությունները ցույց են տվել, որ օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության բարենպաստ պայմաններում կարմիր երեքնուկի վարսանդի կենսոնակությունը պահպանվում է 4—6 օր: Գլխիկների սերմակալման ամենաբարձր տոկոսը ստացվում է այն դեպքում, երբ փոշոտումները կատարվում են ծաղիկները բացվելու առաջին և երկրորդ օրերում:

Ա. Մ. Կոնստանտինովան [3] նշում է, որ առվույտի վարսանդը նորմալ պայմաններում իր կենսոնակությունը պահպանում է 2—5 օր:

Շաբդարի վարսանդի ու ծաղկափոշու կենսոնակության պահպանման տևողության ուսումնասիրությունները, որոնք կատարվել են երկրագործության ինստիտուտի բույսերի գենետիկայի բաժնում 1965 և 1966 թթ. ընթացքում, ցույց տվեցին, որ մեկուսիչների տակ վերցված տարբեր բույսերի ծաղկազլխիկների ծաղիկները (միևնույն օրը բացված) տարբեր օրերում փոշոտելու դեպքում տարբեր արդյունք է ստացվում:

Սերմակալման բարձր տոկոս ստացվում է այն դեպքում, երբ փոշոտումները կատարվում են ծաղիկները բացվելու առաջին, երկրորդ և երրորդ օրե-

քում: Հետագա փոշոտումները տալիս են սերմնակալման համեմատաբար ցածր տոկոս, իսկ յոթերորդ օրը վարսանդը զրեթե կորցնում է իր կենսունակությունը:

Թիթեռնածաղկավոր խոտաբույսերի ծաղկափոշու կենսունակության պահպանման տևողության ուսումնասիրություններից պարզվել է, որ ծաղկափոշին ավելի զգայուն է արտաքին պայմանների նկատմամբ և համեմատաբար ավելի շուտ է կորցնում իր կենսունակությունը, քան վարսանդը:

Ըստ Պ. Ն. Վեպրիկովի [1] տվյալների, ծաղկափոշու կենսունակության վրա բացասաբար են անդրադառնում հատկապես օդի հարաբերական խոնավության բարձրացումը և ջերմաստիճանի իջեցումը: Արհեստական միջավայրի տարբեր պայմաններում կարմիր երեքնուկի ծաղկափոշու ծեցման փորձերից նա ստացել է հետևյալ արդյունքը. եթե նորմալ պայմաններում պահված ծաղկափոշին 15 րոպեի ընթացքում ծլում է 86,0%-ով, իսկ 48 ժամ պահելուց հետո՝ 72,8%-ով, ապա օդի հարաբերական խոնավության բարձրացման դեպքում, 15 րոպեում ծլում է փոշեհատիկների 85,7%-ը, իսկ 48 ժամ պահելուց հետո՝ 13,2%-ը:

Ա. Ա. Մատթեոսյանի [4] ուսումնասիրություններից պարզվել է, որ կոբրենզանի ծաղկափոշին նորմալ պայմաններում կարելի է պահել մինչև 3 օր, որից հետո այն կորցնում է իր բեղմնավորման ունակությունը:

Համաձայն Ա. Մ. Կոնստանտինովայի [3] հետազոտությունների, առվույտի ծաղկափոշին իր կենսունակությունը պահպանում է 2—5 օր: Շաբդարի ծաղկափոշու կենսունակության պահպանման տևողության մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ օդի 25—26° C ջերմության և 50—55% հարաբերական խոնավության պայմաններում ծաղկափոշին իր կենսունակությունը պահպանում է մինչև 5 օր, սակայն սերմակալման բարձր տոկոս (87,0—93,7) ստացվում է այն դեպքում, երբ փոշոտումը կատարվում է թարմ ծաղկափոշով, այսինքն՝ ծաղկափոշու պահպանմանը զուգահեռ իջնում է նրա բեղմնավորելու ունակությունը:

Ամփոփելով շաբդարի վարսանդի և ծաղկափոշու կենսունակության պահպանման տևողության առանձնահատկությունների վերաբերյալ մեր հետազոտություններից ստացված արդյունքները, հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Վարսանդը իր կենսունակությունը պահպանում է 6—7 օր, սակայն բեղմնավորման լավ արդյունք ստացվում է ծաղիկները բացվելու առաջին, երկրորդ և երրորդ օրերում կատարված փոշոտումների դեպքում:

2. Օդի 25—26° C ջերմության և 50—55% հարաբերական խոնավության պայմաններում ծաղկափոշին իր կենսունակությունը կարող է պահպանել մինչև 5 օր, սակայն սերմակալման բարձր տոկոս ստացվում է ծաղիկները թարմ ծաղկափոշով փոշոտելու դեպքում:

ՀՍՍՀ երկրագործության

գիտահետազոտական ինստիտուտ

Ստացվել է 30.XII 1967 թ.

Р. Е. АНАСТАСЯН

ИЗУЧЕНИЕ ПРОДОЛЖИТЕЛЬНОСТИ ЖИЗНЕСПОСОБНОСТИ
ПЫЛЬЦЫ И РЫЛЬЦА У ПЕРСИДСКОГО КЛЕВЕРА

Р е з ю м е

Целью настоящего исследования является выявление длительности сохранения жизнеспособности рыльца и пыльцы у персидского клевера (*Trifolium resupinatum* L.), которое имеет определенное значение для селекционно-семеноводческих работ.

Исследования проводились на экспериментальной базе отдела генетики растений АрмНИИЗ в 1965—1966 гг.

В результате наших исследований сделаны следующие выводы:

1. рыльца свою жизнеспособность сохраняют в течение 6—7 дней, однако хорошие результаты оплодотворения получаются при опылении в первый, второй и третий день раскрытия цветка;
2. при наличии температуры воздуха 25—26°C и относительной влажности 50—55%, пыльца свою жизнеспособность может сохранять до 5-ти дней. При этом наиболее высокий процент завязывания получается при опылении свежей пыльцой.

Գ Լ Ը Կ Ը Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Веприков П. Н. Опыление сельхоз. растений. Сельхозгиз, 1936.
2. Голубев Н. П. Методика селекции многолетних кормовых трав. Труды по прикладной ботанике, генетике и селекции. Вып. 2, 1931.
3. Константинова А. М. Селекция и семеноводство многолетних трав. Сельхозгиз, 1960.
4. Մ ա տ Թ և ո յ շ ի Ս. Ս. Հայաստանի կորնզանները, Երևան, 1950: